

8089

8090

8091

8092

8093

8094

8095

8096

8097

8098

8099

8100

891-99

9-70

48

Bound by
Standard Bookbinding Co.
34-36 Pleasant Street,
Boston, Mass.

ԿԱՐԼ ԿԱՌԻՑԿԻ
ԱՊՍՏԱՄԲ ՅԻՍՈՒՍԸ




Թարգմ. Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆՑ

ՏՊԱՐԱՆ „ԿՈՀԱԿ“
Կ. Պոլիս, Պապ Աչի էպուստոս փողոց թիւ 27
1913

ԿԱՐԼ ԿԱՌԻՑԿԻ

ԱՊՍՏԱՄԲ ՅԻՍՈՒՍԸ

232
Կ-37



Թարգմ. Ս. ՇՈՒՀԱՆՆԷՍՅԱՆՑ

ՏՊԱՐԱՆ «ԿՈՇԱԿԻ»

Կ. Պոլիս, Պապ Աղի Էպուսուս փողոց թիւ 27
1913

15767



Կ. ԿԱՍԻՅԿԻ

1.

Որ քրիստոնէութիւնը սկզբից եւեթ վշտալի հնա-
զանդութեան մի կրօն է եղել, Յիսուսը ինքը ամեն մի
բռնութիւնից հեռու էր պահում իրեն, այդ համար-
ւում է մինչեւ այսօր մի հաստատուն ճշմարտութիւն
այս կրօնի բարեկամների եւ թշնամիների կողմից: Աւե-
տարաններում, ինչպէս եւ առաքեալների պատմութեանց
մէջ, չէ՞ որ ամենաուժեղ կերպով շեշտւում է ամեն
բռնութեան կրակորական հպատակութիւնը, չէ՞ որ Յի-
սուսն ասում է՝

«Լուսարուք զի տաքաւ ակն ընդ ական եւ ատամն
ընդ ատաման: Այլ ես ասեմ ձեզ, մի՛ կալ հակառակ
չարին, այլ եթէ ոք ածիցէ աստակ յաջ ծնօտ քո,
դարձո՛ւ նմա եւ զմիւսն» . (Մատթէոս Ե. 38. 39):

Բայց իւրաքանչիւր աւետարան մի հեղինակի գործ
չէ, նրանցից ամեն մէկը պարունակում է տարբեր ծագ-

78125-4.2



849-87 91

ման կտորներ , որոնք առհասարակ մի ամբողջութեան մէջ շատ էլ յաջող չեն միացել , ուստի եւ զանազան տեսակի հակասութիւններ աչքի են ընկնում : Այսպէս , նրանց մէջ կան այնպիսի կտորներ , որոնք ուղղակի ցոյց են տալիս մի ըմբոստ մտածողութիւն , եւ մինչեւ անգամ երեւան են հանում ապստամբողական գործողութեանց ցուցմունքներ : Նոքա անհամապատասխան են աւետարանների ընդհանուր ոգուն : Ինչպէս են նոքա այդտեղ ընկել :

Սա մէկն է այն հարցերից , որոնք ինձ զբաղեցնում էին « քրիստոնէութեան ծագումը » գիրքը գրելիս : Ես գտայ , որ դորա համար կարող է լինել միայն մի պատասխան , որ վստահում է բոլոր հակասութիւնները : Դա այն ենթադրութիւնն է , որ քրիստոնէական համայնքը սկզբում ապոստամբողական բնոյթ ունէր եւ դրա յիշողութիւնն է , որ սպրդում է ակնարկած տողերում : Միայն յետոյ է քրիստոնէութեան մէջ ամեն մի բռնութեան համբերելու պահանջը մտել , ապա թէ փորձել են աւանդութիւններից բռնի ապստամբողականութեան բոլոր հետքերը արմատահան անել : Սակայն այդ բանը կատարել է թերի եւ այդպիսով նախնական բնաւորութեան մի քանի հետքերը մնացել են տակաւին :

Այս ենթադրութիւնը ոչ միայն փարստում է մի շարք հակասութիւններ աւետարաններում , այլ եւ շատ լաւ յարմարում է այն պատմական կացութեան , որի մէջ յառաջ եկաւ քրիստոնէութիւնը : Պաղեստինում հրէութիւնը եւ յատկապէս նրա ստորին խաւը , հռովմէական իշխանութեան տակ յուսահատութեան էր հասել . բոլոր գործունեայ տարրերը , բացառութեամբ քահանայական ազնուականութեան , ճգնում էին հռովմէական լծի բռնի թօթալման համար : Գնալով աւելի սրում էին հակառակութիւնները , հետզհետէ ուժգնօրէն ա-

ճում էր զայրոյթը , որը իւրաքանչիւր առթիւ ինչպէս երուսաղէսում , աֆսպէս էլ Գալիլիայում խռովութեան ու աղտոտամբութեան կերպարանք էր ստանում , մինչեւ որ բանը հասաւ այն ուժեղ պայթիւնին , որ հրէական պետական ամբողջութեան մի վերջ պէտք է տար :

Բայց ինչքան մեր ենթադրութիւնը ատակ է նախնական քրիստոնէական գրականութեան հակասութիւնները լուծելու , եւ ինչքան նա յարմարում է նախնական քրիստոնէութեան միջավայրին , այնքան էլ նա անհամաձայն է ոչ միայն աւանդական հայեացքների հետ , այլ եւ այն ամենի հետ , որոնք այսօր քրիստոնէութեան կենսական ոյժն են կազմում : Սա կրօնն է բոլոր խեղճերի ու ճնշածների , որոնք մի աւելի լաւ կեանք են տեսնում ամենայն եռանդով , բայց իրենց մէջ ոյժ չեն զգում նրա համար կուելու : Սա կրօնն է ուժեղների եւ հարուստների , որոնք թոյլ չեն տալիս աղքատների ու ճնշածների մէջ առաջ գայ ոյժի գիտակցութիւնը : Նրանց բոլորի համար լուութեամբ համբերող Յիսուսը պօլեւտարի նախատիպ է դարձել : Եթէ այս նախատիպը , որպէս ապստամբ է երեւան գալիս , այն ժամանակ քրիստոնէութիւնը դադարում է այն կրօնը լինելուց , որ պիտի պահպանուէր ժողովրդի համար :

Հարցի այս գործնական հետեւութիւնը պէտք է պարզեւէ նրան մեծ հետաքրքրութիւն . նա դադարում է մի զուտ վարդապետական հարց լինելուց :

Այս բանը լաւ է հասկացել մի աստուածաբան , որ մօտ ժամանակներս յիշատակած աշխատութեանս դէմ մի գրքոյկ էր ուղղել : Ինչպէս առաջաբանում նկատում է « իւրաքանչիւր պաշտօնի մէջ եղած Աստուածաբանի համար անթոյլատրելի է համայնքի պատահական Սօցիալ Դէմօկրատ անգամների առաջ այս կէտում պատասխանատուութեան ենթարկել » :

Միւս կողմից այս գործնական հետաքրքրութիւնը պարզապէս վտանգ է բերում իւր հետ տեսողութեան անըմբռնողութիւնը պղտորելու համար : Այս դէպքում միայն իմ աստուածաբան քննադատների համար :

Մենք Մարքսիստներս յենում ենք մեր յեղափոխական սօցիալիզմը ոչ թէ Յիսուսի օրինակի, այլ տնտեսական խորհրդածութեանց վրայ : Ինչպէս էլ լինի մեր նախնական քրիստոնէութեան հետախուզութեան արգիւնքը, մեր պրաքտիկան եւ նրա հիմքերի անդրդեւ լիութիւնը մ'նում է անխախտ : Մենք քրիստոնէութեան ծագման վերաբերմամբ մի շահ միայն ունինք, ըմբռնել այն, դուրս բերել նրան հրաշքների շարքից : Իւրաքանչիւր տեսութիւն, որ մեզ ըմբռնելի կը կացուցանէ նրա ծագումը՝ կարծանանայ մեր անմիջական ուշադրութեան :

Այսպէս ես չեմ պնդում, որ առաջին քրիստոնեաները ասպտամբներ են եղել, սա մի ենթադրութիւն է, որ աւետարանների հակասութիւնները պարզելու համար ինձ աւելի լաւ է երեւում եւ որ ամենից աւելի համապատասխանում է այն վայրի պատմական դրութեան, ուր քրիստոնէութիւնը ծագել է : Ես սիրով կը թողնեմ այն, եթէ առաջ գայ մի ուրիշ ենթադրութիւն, որ յաջողէ նոյն հակասութիւնները աւելի լաւ կամ գոնէ նոյնքան լաւ լուծել եւ որ համապատասխանէ այն ժամանակի հանգամանքներին :

Արդ, յաջողե՞լ է այդ խնդիրը յիշեալ աստուածաբան դոքտ. Վինտիշին, կամ առնա՞լիս կարողացե՞լ է նա ցոյց տալ իմ ենթադրութեան անկայունութիւնը : Ամենից առաջ նա փորձում է վերջինը, նա պնդում է, որ իմ մեկնութիւնը առաջ է բերել մի «անլուծանելի առեղծւած» :

«Ինչք միասին պահեց ասպտամբի հետեւորդներին

իրենց առաջնորդի մահւան դատաւարտելուց յետոյ, դա մի անօրինակ բան է» :

Կարող էր պատահել, որ առաջնորդի անկումից յետոյ նրա աշակերտները դեռ աւելի եւս գրգռէին, սակայն այդ դէպքում միւս կողմ հրէաների հետ պէտք է ուղղակի կորուէին :

«Երբէք մի վաղուց ընկած մոլեռանդ գլխաւորի անունով մի նոր կազմուղ համայնք չի եղել, որը հակասական իդէալներ ունենար : Աւետարանական քրիստոնէական յայտնութեան հանճարեղութիւնը, խորութիւնը եւ պարզութիւնը դուրս է բերում մի ստեղծագործող անձնաւորութիւն, որը աճեց հեռու յեղափոխական գործնէութեան անհանգիստ վայրերից : Յիսուսը, որին քրիստոնեայ համայնքը արդէն 70 տարի յետոյ պաշտում էր ու յարգում, չէր կարող յեղափոխական շրջաններից ծագած լինել, որոնց ձգտումները համայնքը ինքը արհամարհում էր : Այսպէս խորտակում է մարքսիստ կառեցիկը ըմբռնումը, երբ մարդ սառն ու լուրջ կերպով կշռադատում է այն» . (Ե. 45) :

Այս բացատրութիւնները ամենից առաջ ցոյց են տալիս, թէ ինչպիսի արժէքաւոր նեցուկ եւ ինչանհրաժեշտ նախապայման է մի յառաջացող յեղափոխութեան գործնական խորին ծանօթութիւնը նախնական քրիստոնէութիւնը ուսումնասիրելիս : Պ. Դոքտ. Վինտիշին իմ «ըմբռնումը» անկայուն է երեւում, որովհետեւ նա չի կարող երեւակայել նրա նախընթաց դրութիւնները : Նոքա պէտք է «առանց նմանութեան» լինին : Եւ սակայն նա նմանութիւններ է գտնում ոչ միայն Ռեֆորմացիայի ժամանակի կօմունիստական աղանդների, այլ եւ ժամանակակից Սօցիալիզմի պատմութեան մէջ :

Յունական թաքորիսները, օրինակ, շատ ըմբոստ բնաւորութիւն ունէին, ճնշւելուց յետոյ նոցա աղանդն

ընդունեց շատ խաղաղ ընտանոթիւն , բոհեմական եղբայրութիւն անւան տակ : Կրկնակնիքները հոյնալէս նայած պատմական կացութեան ըմբոստ կամ հնազանդ եւն եղել :

Բայց եթէ մի սեքտ կամ միութիւն փոփոխուում է , հեշտութեամբ կը փոփոխուի նաեւ այն հասկացողութիւնը , որ վերագրուում է այդ միութեան հիմնարկողին , որի ուսման վրայ կազմուում է այդ միութիւնը :

Նոյն իսկ մի այնպիսի մարդու մտքերը , ինչպիսին Մարքսն է , որ թողել է պարզ ու մեկին երկեր , ապահով չեն այս ճակատագրից : Արդէն այսօր այդ մեծ յեղափոխականը չի՞ ներկայացուում բեւիզիօնիստների կողմից , որպէս հակայեղափոխական : Եթէ Ս. Դեան ամբողջովին բեւիզիօնիստ լինէր՝ այն ժամանակ Մարքսը հասարակութեան գիտակցութեան մէջ կապրէր , իբրեւ հակառակորդ ամեն մի յեղափոխական գործնէութեան : Ինչքան աւելի հեշտ կերպով հնարաւոր էր մի այնպիսի անձնաւորութեան շուրջը եզոզ աւանդութեան փոփոխւիլը , որի գործերն ու կեանքը երկար դարեր ապրում էին միայն բերանացի : Թէ ինչքան քիստոնեաները ընդունակ էին իրենց հասած գաղափարները վերագրելու իրենց Աստուծոյն , կարելի է իմանալ նրանից , որ աւետարանների մէջ մտքերի ամբողջ շարքեր ցոյց են տրւած , որպէս Յիսուսի խօսքեր , մինչդեռ այդ մտքերը նրանից առաջ արդէն յայտնի էին :

Դեռ աւելին , որպէս թէ իմ ենթադրութիւնը անօրինակ է , հէնց մեր կուսակցութեան զարգացման , ինչպէս եւ միջնադարեան կոմունիստական սեքտերի եւ ռեֆորմացիայի պատմութեան մէջ եղող նման օրինակները ինձ այն մտքին են բերել , որ նախնական քրիստոնէութեան մէջ նմանօրինակ մի գիալէքտիկական ծածկոցի հետ գործ ունինք : Եւ երբ ես աւանդուած

վկայութիւնները այս տեսակէտով վերլուծեցի , յանկարծ ինձ համար պարզեց շատ բան , որ ցարդ անհասկանալի էր եղել :

Դեռ մեր աստուածաբան դոքտորը յեղափոխական շարժմանց իրական պատմութեան վերաբերմամբ իրեն աւելի քիչ վստահ է ցոյց տալիս , երբ նրան անհաւատալի է երեւում , որ «մի ապստամբի յաջորդները» գլխաւորի մահից յետոյ շարունակեն իրենց համակեցութիւնը :

Պատահում է , ինչպէս վիւդիշն ընդունում է , որ մի ապստամբական սեքտ կամ միութիւն իւր գլխաւորի մահանից յետոյ կազմալուծուում է կամ թոյլ ճիւղերի է բաժանուում եւ հետզհետէ անհետանում է , բայց վիւդիշը սխալւում է , երբ կարծում է , որ առաջնորդի մահից յետոյ մի այլ հետեւանք անկարելի է : Միթէ չեն պատահել օրինակներ , երբ յեղափոխական շարժումներ ոչ միայն ղեկավարների դատապարտութեամբ այլ եւ մասնաշաղկապ կոտորածներով խեղդւել են ար , եան մէջ , բայց մի քանի տարի յետոյ վերսկսուել են եւ ոչ թէ անգոր զարոյթ դուրս թափելու այլ հասուն ու դրական գործի անարդեւ առաջխաղացութեան համար : Ոչ 1848-ի յունիսեան ճակատամարտը , ոչ 1871-ի մայիսեան շաբաթը չրկարողացան խեղդել Սօցիալիզմը Ֆրանսիայում :

Կամ , եթէ վիւդիշը բերում է մի աւելի քիչ մասնաշաղկապ եղող շարժման օրինակ , յիշենք , թէ ինչպէս քիչ յաջողեց 70-ական եւ 80-ական թուականներին ռուսական աքսօլիտիզմին այնքան անթիւ յանդուգն ու սրամիտ յեղափոխականների մահացումով ընդամիշտ խեղդել Ռուսաստանում սկսած յեղափոխական շարժումը :

Առաջնորդի դատապարտումով յեղափոխական կազմակերպութեան լուծուիլը կամ չլուծուիլը կախած է

նրանից, թէ արդեօք այդ կազմակերպութիւնը միայն իւր առաջնորդի անսովոր անհատականութեան արդիւնք է, թէ նա անհրաժեշտ կարիքներից է ծագել, որոնք հասարակական հանգամանքների շնորհիւ միշտ նորից հանդէս են գալիս: Եթէ քրիստոնէութիւնը, ինչպէս ես ենթադրում եմ, այդպիսի հանգամանքների եւ նրանցից բղխող հոգեբանական կարիքների արդիւնք էր, դրանով ցուցադրուած է միաժամանակ եւ այն պատճառը հանգամանքը, որ «Ապստամբի հետեւորդներին իրենց պետի մահանից յետոյ միացած պահեց»: Աստուծաբանական տեսակէտից, որից Դոմ. Վինգիշն է ելնում, ընդհակառակը այդ միութիւնը ըստ ամենայնի անբացատրելի է մ'հուով: Աստուծաբանների համար քրիստոնէութիւնը բացարձակապէս Քրիստոսի «ստեղծագործող եւ կրօնական անձնաւորութեան» արդիւնք էր:

«Եթէ մենք կամենում ենք հասկանալ նախնական քրիստոնէութիւնը, մենք չըպիտի ինկատի ունենանք մի համայնական կամք կամ մի կուսակցական ուսմունք, այլ այն անձնաւորութիւնը, որ ստեղծեց շատերի կամքը եւ իւր վարդապետութեան ու գործերի միջոցով հիմք դրեց համայնքի ու նրա հայեացքներին(Ե. 28 եւ 93):

Ով կանգնած է այս տեսակէտի վրայ, նրա համար բացարձակապէս անհասկանալի կը մ'նայ «ապստամբի հետեւորդների» համակերպութիւնը «իրենց առաջնորդի մահապարտութիւնից յետոյ»: Բայց այս դէպքում դոյզըն ինչ աւելի հասկանալի կը դառնայ միթէ նրանց համախմբութիւնը, եթէ նոքա չունենային ապստամբական բնոյթ, այլ ունենային խաղաղ ոգի: Աստուծաբանական հասկացողութեամբ նրանց միասին է պահել միայն իրենց առաջնորդի անձնաւորութիւնը, միայն նա է նրանց ոյժ ու յարատեւութիւն տւել: Իւր անձնաւորութեամբ ու ուժով նա այնքան վերազանց էր, որ նրա հաւատա-

րիմ աշակերտներն իսկ նրան չէին հասկանում: Նրա կալանաւորութիւնն արդէն նրանց շփոթեցրեց ու վախեցրեց:

Եթէ Աստուծաբանները վարդապետի դատաւարտութիւնից յետոյ համայնքի անքակ մ'նալը այսպիսի հանգամանքների միջոցով են ուղղում բացատրել, իսկապէս նրանց այլեւս ոչինչ չէ մ'հուով, բայց եթէ ապստան որոնել մի հրաշքի մօտ: Նոյնիսկ նրանցից ամենալուսաւորւածներն էլ օժեալի յարութեան մէջ են տեսնում այն գործօնը, որ ցրւած համայնքը պահում է միասին: Լուսաւորւածները ուղղափառներից տարբերում են միայն նրանով, որ նրանք յարութիւնը մի քանի աշակերտների հալլուսխասիոնին են սոսկ վերագրում: Բայց որ մի կազմակերպութիւն-համայնք, որ արդէն համարեա երկու հազար տարի կեանք ունի եւ որ երկար դարեր իշխել է ամբողջ քաղաքակիրթ աշխարհին, մի կամ մի քանի անյայտ խեղճ մարդուց է առաջ եկել, դա ինքը պակաս հրաշք չէ, քան մի մեռածի յարութիւնը:

Այն գործօնի հարցը, որ աշակերտներին իրենց ուսուցչի մահանից յետոյ միացած պահեց, ինձ չէ վերաբերում, այլ նրանց, որոնք ինձ առարկում են:

II

Բացի այն ցուցմունքից, թէ ապստամբների միասին մ'նալը առաջնորդի մահանից յետոյ «անօրինակ բան է», Վինգիշը չի բերում ուրիշ ոչինչ, որը ցոյց տար իմ ենթադրութեան անհնարին լինելը:

Շարունակելով նա ձգտում է հակասութիւնների համար տուած իմ բացատրութեան դէմ դնել մի ուրիշը, որ աւելի լուռ համապատասխանէր Յիսուսի լուռ համ-

բերութեան աւանդական ըմբռնման : Եթէ այդ բանը նրան յաջողէր , դրանով դեռ եւս նա բացարձակապէս ցոյց տւած չէր լինի , որ իմ վարկածը կեղծ է , ոխալ է , այլ միայն նա կը կորցնէր իւր հաստատութիւնը եւ կը դառնար երկբայելի :

Դժբախտաբար վիսդիշի լուսաբանման փորձերը վերաբերում են միայն իմ մի քանի առարկութեան , համարեա ամենակարեւոր կէտը , որի վրայ յենում է իմ տեսութիւնը , նա աչքաթող է անում առանց նոյն իսկ լուսաբանութեան մի փորձ անելու :

Ես կարծում եմ ինձ յաջողել է իմ գրքում ցոյց տալ , որ Յիսուսի չարչարանքի պատմութիւնը իւր ներկայ ըմբռնմամբ պարունակում է անստույգութիւնների մի կոյտ , որոնց նպատակն է միայն ամեն արժէքով հրէաներին որպէս Յիսուսի մահապարտութեան հեղինակ ցոյց տալ : Պրօքսը , որ յանգեց գալիլիացու դատաւարութեան , այն ժամանակ միայն մի միտք կունենար , եթէ նա մեղադրէր , որպէս Հռովմի դէմ ապստամբութեան ձգտում ունեցող :

Դրա հետ սերտ կապւած է այն , որ Յիսուսը ինքն իրեն աւետարանի պատմութեան համաձայն Մեսիա էր հրատարակում , որի համաձայն եւ ապրեց պատմութեան մէջ : Քրիստոս՝ յունարէն բառն է Մեսիայի համար : Բայց , համաձայն այն ժամանակի ընդհանուր հրէական լեզուի գործածութեան , Մեսիա բառի տակ հասկացւում էր հրէա ժողովրդի ազատելը , որ թօթախելով օտար լուծը պէտք է առաջնորդէր նրանց դէպի բոլոր ազգերին յաղթահարելը : Մակաբայեցւոց ժամանակից սկսած Մեսիականների միութիւնը մի մարտական միաբանութիւն էր : Մեսիականութեան այս պիտի ըմբռնումը ընդունւում էր ամբողջ հրէութիւնից , միայն ամ պակաս հրաշագոր ուժերի գունաւոր

մամբ , որոնց միջոցով պէտք է գործէր Մեսիան , տարբերում էին միմիանցից մեսիական զանազան ակնկալութիւնները :

Եթէ Յիսուսը չէր բաժանում այս մարտական ակնկալութիւնները , այլ աւելի շուտ դատաւարտում էր , եթէ նա լուռ համբերութիւն , հրաժարումն եւ հոգու մաքրութեան համար բոլոր ձգտումների սահմանադրումնէր պահանջում , այն ժամանակ նա բոլորովին անհասկանալի կերպով իրեն Մեսիա հռչակեց :

Ազգակող հակասութիւնը մեսիականութեան եւ ընդհանրապէս Յիսուսի բերանը դրած աւետարանների միտումների՝ այլեւս այսօր չի կարող ընդունւիլ , որովհետեւ սկսած երուսաղէմի կործանումից մեսիական հին ըմբռնումը դադարեց հետզհետէ ազդելուց եւ ըստ ամենայնի քրիստոնէական շրջանում մի նոր հասկացողութիւն՝ մեղքերի թողչի՝ հանգէս է եկել եւ արմատացել : Բայց մենք Յիսուսին իւր ժամանակի եւ ոչ թէ յետագայ դարերի չափով ենք չափում , իսկ այն ժամանակ նա միայն կարող էր իրեն Մեսիա անւանել , ով իրեն կոչուած կը զգար հրէայ ժողովրդին ճնշողների վրայ յաղթութիւն տանելու :

Եթէ մի հեզ ու համբերող մէկը իրեն այն ժամանակ Մեսիա անւանէր , այդ նոյնքան անմիտ բան կը լինէր , ինչքան որ , եթէ այսօր թօլստոյը իրեն բօմբաձիգ տեռորիստ ցոյց տար , դիպւածական յաւելումներով , նա բնականաբար կը մտածէր միայն հոգեւոր բօմբերի մասին , տեռորը , որ նա ուզենար կատարել , կը լինէր յետ ընկրկումն ամեն տեսակի բռնութեան առաջ , գալով ուժին , որով նա ուժեղներին ճնշել կամենար , դա էլ կը լինէր մեղմութեան ու հրաժարման նախաաւելի ոյժը : Եւ եթէ այն ժամանակ մի քննող դատաւոր , որ չի ճանաչում այս խտրութիւնները , զա-

տումները, կանչէ թօլստոյին իւր առաջ եւ հարցնի : ճիշտ է, որ դու մի բօմբաձիգ տեռորիստ ես եւ մեղադրւողը պատասխանէ, — դու ասացիր, այն ժամանակ ով ճանաչում է թօլստոյի իսկական հայեացքները, չի կասկածի որ մեծ բանաստեղծը խելագարւել է :

Այս բոլոր մտածումները Պ. Վինգիշի համար գոյութիւն չունին : Այն ցուցմունքը, թէ Յիսուսի չարչարանքի պատմութեան մէջ միայն այն ժամանակ միութիւն եւ միաբ կը գտնէ, երբ մարդ ընդունէ, որ Յիսուսը դատուեց որպէս դաւադիր ընդդէմ Հռովմի, նա անտես է առնում, ինչպէս եւ այն, որ նոյնիսկ դեռ աւետարանների մէջ հին հրէական մեծիական ըմբռնումը անցնում է կարմիր թելի պէս :

Նա զբաղւում է միայն աւետարանի մի քանի կտորներով, որ ես իմ գրքի «Յիսուսի ապստամբականութիւնը» գլխում բերել եմ իմ տեսակէտի պաշտպանութեան համար :

Եթէ Յիսուսը ասում է Մատթէոսի աւետարանում (Ժ. 34), թէ «մի համարէք, եթէ եկի արկանել խաղաղութիւն յերկիր, ոչ եկի արկանել խաղաղութիւն, այլ սուր», ըստ Վինգիշի այս պէտք է «զուտ հոգեւոր» մտքով ըմբռնել, այն է սուրը ուրիշ ոչինչ չէ նշանակում, բայց եթէ ընտանեկան գոտութիւն, եւ այս նախադասութիւնը ոչ թէ գոռոզ կուարարութիւն, այլ վշտալի ավազանք է արտայայտում : Վինգիշը կարծում է «Ապաշխարութեան, սիրոյ եւ խաղաղութեան քարոզիչը պէտք է իցաւ իւր զգար ու գոչէր, որ իւր ցանկացած ելքը իւրաքանչիւր մարդու պէտք է բաժանէր իւր սեպհական ընտանիքից» (Ե. 46.) :

Այդ բանը փոխադարձ յարաբերութիւններից պէտք է առաջ դար : Սակայն սուրին վերաբերող նախադասութիւնը չի մասնանշում միայն ընտանեկան կեանքի

գոտութիւնը, այլ նաեւ ցուցադրում է առաքեալներին, թէ քանի նրանք ազիտացիա էին անում պիտի հակառակ լինէին ազգաբնակութեան եւ իշխանութեան : Յիսուսը ընտանիքների տարաձայնութեան մասին էլ, որ իւր վարդապետութեան հետեւանքը պիտի լինէր, խօսում է, բայց միայն կռիւ սրութիւնը ցոյց տալու համար, «Մասնեցէ եղբայր զեղբայր ի մահ եւ հայր զորդի, եւ յարիցեն որդիք ի վերայ հարց եւ սպանանիցեն դոռս» . սա աւելի շուտ քաղաքացիական կռուում «հօր եւ մօր վրայ հրազեն պարպելն» է յիշեցնում :

Որ այնտեղ սուր խօսքը պէտք է զուտ հոգեւոր մտքով հասկանալ, արդէն իրաւամբ կասկածելի է դառնում :

Բայց մենք չը պէտք է երկար դեգերինք, ինքը Վինգիշը ասում է, որ սուրի մասին եղած միւս խօսքը, որը ես կոչում եմ, չը պիտի հոգեւոր մտքով հասկանալ :

«Եւ ասէ ցնոսա, յորժամ առաքեցի զձեզ առանց քսակի եւ մախաղի եւ կօշկաց, միթէ կարօտացա՞ք իմիք : Եւ նոքա ասեն, եւ ոչ իմիք, ապա ասէ, այլ այժմ որ ունիցի քսակ՝ բարձցէ, նոյնպէս եւ մախաղ, եւ որ ոչ ունիցի, վաճառեցէ զձորձս իւր գնեցէ իւր սուներ : Բայց ասեմ ձեզ, զի այս եւս որ վրեալ է պարտ է զի կատարեցի յիս, թէ ընդ անօրէնս համարեցաւ, զի որ վասն իմ ինչ է՝ վճարեալ է : Եւ նոքա ասեն, Տէր, ահաւասիկ են աստ երկու սուրք, եւ նա ասէ ցնոսա, բաւական են» (Ղուկաս ԻԲ. 35—39) :

Ի՞նչ էին անում աշակերտները սրերը, եթէ Յիսուսը անպայման անձնատրութիւն եւ հնազանդութիւն էր քարոզում : Դրա համար Վինգիշը երկու պատասխան ունի, բայց ոչ մէկը իւր սրտով չէ : Ամենից առաջ նա կարծում է .

«Սուր առնելու պահանջի նպատակն է իւր տասներ-

կու աշակերտներին հին մարգարէութեան անցեալ յիշատակների հետ կապելը (Ղուկաս ԻԲ. 35: Գալիք մեսիսական ճանապարհորդութեան համար Յիսուսը հրամայում էր իւր աշակերտներին սուր կրել իրենց հետ) :

Բնականաբար ոչ թէ խռովութեան, այլ պաշտպանական համար :

Այս հասկացողութեան վրայ Վինգիշը ինքը պէտք է աւելացնէ .

«Անշուշտ այսպիսով էլ այս կարգադրութիւնը հասկատում է Յիսուսի ճանապարհորդութեան նախնական ոգուն : Եթէ այս խօսքը նրան է վերաբերում, ապա նա արտասանել է մի առանձնաշատուկ դրութեան մէջ, երբ նա ընդդիմութեան հակառակ լինելով հանդերձ իւր աշակերտներին սուր պահելը անպայման կարեւոր է համարում» :

Որ այս նախադասութիւնը առաջուց Յիսուսի բերանը դրած վարդապետութեան հետ չի համաձայնում, այդպիսով Վինգիշը ինքն էլ խոստովանած կը լինէր :

Հակառակ դրան այն եղանակը, որով նա յամառ կերպով կամենում է հասկանալի դարձնել, այնուամենայնիւ շատ էլ համոզեցուցիչ չէ : Նա կապում է այդ նախադասութիւնը առաքեալների քարոզչական գործունէութեան նախանցեալի հետ: Ես եւս կարծում եմ, որ այդ երկուսը մի կապ ունին, բայց ես չեմ կարող հասկանալ, ի՞նչ տրամաբանական հետեւութիւն կայ Վինգիշի ցուցադրած կապի մէջ. Յիսուսը հարցնում է աշակերտներին, թէ լավ է անցնում արդեօք իրենց համար քարոզչական ճանապարհորդութեան ժամանակ եւ նրանք ասում են, այո՛, ինչպէս կարող է այս պատասխանը առիթ տալ յայտարարելու, թէ ձեր առաջիկայ քարոզչական ճանապարհորդութեան ժամանակ դուք պէտք է սուր վերցնէք ձեր պաշտպանութեան համար :

Ինչո՞ւ համար էր սուրը, եթէ մինչ այդ առանց սրի նրանց ոչինչ չէր պատահել :

Եւ ոչ միայն անտրամաբանական է այնուհետեւ սրով ճանապարհորդելու պահանջը, այլ եւ անխոհեմ, թափառող մուրացկանները, ինչպիսիք էին առաքեալները, աւագակներից վախենալու ոչինչ չունէին. եթէ նոքա քարոզութեանց ժամանակ թշնամի իշխանութեան կամ ժողովրդական մասսաների վրայ էին յարձակելու, այդ դէպքում ցրած միայնացած քարոզիչների համար իրենց սրերը ոչ մի պաշտպանութիւն չէին կարող ցոյց տալ, նոքա դրանով կարող էին միայն վտանգւել, քանի որ սրերը անվստահութիւն եւ միջնաւ անգամ զայրոյթ կարող էին գրգռել :

Մենք չըզիտենք մի դէպք, որ քրիստոնեայ քարոզիչները զինւած ճանապարհորդած լինին: Մինչեւ այսօր էլ անգէն միսիօնարները վայրենիներից ամենավայրենիների մօտ միայն շնորհիւ իրենց անգէնութեան իշխող օրէնքի դիմաց աւելի յաջողութիւն են ունենում, քան այն ճանապարհորդները, որ տրամադիր են ամէն տեսակ բռնութեան :

Ոչ քարոզչական գործնէութեան մինչ այն ժամանակաւ փորձառութիւնը եւ ոչ էլ իրական մասնաւոր խորհրդածութիւնը ամենափոքր առիթ անգամ չեն տալիս Յիսուսին, եթէ իրօք նա քարոզում էր լուռ խոնարհութիւն, որ նա պատւիրէր իւր աշակերտներին պատրաստել զինւած պաշտպանութեան համար :

Ընդհակառակը բոլոր կտորների ամբողջութիւնը հասկանալի կը լինէր, եթէ ընդունինք, որ Յիսուս պահանջում էր զինումն մի ապստամբական փորձի համար: Այն ժամանակ նա ասում է, դուք քարոզել էք մինչեւ այժմ, ինչպէս ես ձեզ ասել եմ եւ յաջողել էք : այժմ ասուում է այլեւս չխօսիլ, այլ գործել, թող իւրաքանչիւրը ձեռք բերէ իւր համար մի սուր :

Աշակերտների նկատողութեան (թէ այստեղ երկու սուր կայ) եւ Յիսուսի պատասխանի համար (թէ բաւական է) Վինդիշը ինքը խոստովանում է, որ իւր մեկնութիւնը այն կտորի, որը որպէս թէ ցուցմունք է ապագայ միսիօնէրական գործնէութեան, այստեղ չի յարմարւում: Եւ դորա համար նա առաջ է բերում նոյնպիսի մի երկրորդ մեկնութիւն. — Յիսուսը պահանջում էր աշակերտների զինումն, ոչ թէ միայն ապագայի, այլեւ ներկայի համար, եւ այն ոչ թէ յարձակման, այլ պաշտպանելու համար:

«Աշակերտների յայտնումը (թէ այստեղ երկու սուր կայ), եւ նրան հետեւող Յիսուսի պատասխանը (թէ բաւական է), լաւ չի յարմարւում ապագայ քարոզչական գործնէութեան ցուցմունքին: Սրերի պատրաստ լինելը որպէսպէս յայտնւեց եւ Յիսուսից գործածութեան համար օգտակար համարւեց: Այդ կարգադրութիւնից յետոյ իւրաքանչիւրը կարող էր մի սուր ունենալ, դեռ միայն վեցերորդ մասն էր հայթայթուած: Գուցէ առաքելութեան վերաբերող նկատողութիւնները մի ուրիշ կապ ունին: Յամենայն դէպս աշակերտների պատրաստութիւնը եւ Յիսուսի վճիռը ցոյց են տալիս, որ այդ խումբը որ եւ է կուի չէր գնում. այսպիսի դէպքում նոքա կը ներկայացնէին մի ծիծաղելի «միութիւն» եւ նրանց առաջնորդը շատ էլ խելօք եղած չէր լինի: Այսպէս Յիսուսը այստեղ էլ միայն մի յարձակման դիմադրելու մասին կարող է մտածած լինիլ: Նա կռահել էր իւր թշնամիների ծրագիրը եւ տատանման մէջ կարող էր ընկած լինիլ, պէտք էր պաշտպանուիլ արդեօք, թէ անձնատուր լինել: Գեթմանի այդու ինքնամարտնչող աղօթքի պատմութիւնը ցոյց է տալիս, որ զինուած պաշտպանութեան մտածմունքը նրան պաշարել էր, միայն իւր աղօթքի վերջում նա վճռեց անձնատուր լինել:

Եւ երբ իւր պաշտպանութեան համար իւր առաջօրէն պատուիրած սրերից մէկը մերկացւեց, նա արգիլեց իւր խիղախ աշակերտին յետախու գործածելը: Նա հաւանօրէն չը նկատեց, թէ ինչ փոփոխութիւն է առաջ եկել իւր ուսուցչի մէջ, թէ ինչպիսի որոշում էր նա կայացրել: Այսպէս Յիսուսը ինքը զինած պաշտպանութեան պատուիրանը մի կողմ նետեց եւ վերադարձաւ այն նախկին դրութեան, որ քարոզել էր բոլոր աշակերտներին՝ համբերել եւ տանջուիլ» (Ե. 48, 49):

Այս տեղ էլ Վինդիշը կրկին պիտի ինքն ասէ, որ Յիսուսի այս տեղում յիշատակուած խօսքերի եւ նրա յետագայ վարմունքի մէջ մի ակնյայտ հակառակութիւն կայ: Բնականաբար նա այստեղ էլ չէր կարող մտածել լուծել հակառակութիւնը՝ ընդունելով, որ Յիսուսի կեանքի մասին երկու տարբեր աւանդութիւններ կան, մէկը յետագայ, որի մէջ դուրս է եկել որպէս համբերող եւ մէկը առաջւայ, որի մէջ դուրս է եկել որպէս ըմբոստացող եւ որ վերջինիս հետքերը ի միջի այլոց առաջիններէն, կցուելով մ'նայեւ են, սակայն սրանց բուն նշանակութիւնը այնուհետեւ խառնուել է նրանց հետ եւ կազմել անլուծանելի հակասութիւններ:

Զինուելու պահանջը չրպէտք է ընդունիլ որպէս կուի ծրագիր, որովհետեւ երկու սուրն Յիսուսը բաւական համարեց. դրանով չէր կարելի կուիլ: Շատ ճիշտ է, եթէ Յիսուսը այդ կամենար նա անշուշտ «համարեա ամենախելօքը չէր լինի»: Սակայն նա ամենափոքր չափով անգամ խելօք չէր լինի եւ նոյն դէպքում, երբ երկու սուրը բաւական համարեց Երուսաղէմի զինեալ ուժի մի ձեռնարկութիւն յետ մղելու համար: Այսպէս թէ այնպէս՝ երկու թիւը յամենայն դէպս անմիտ է այստեղում: Այս նախադասութիւնը կա՛մ եղծւել է կա՛մ անհասկանալի կերպով առաջ է բերւել մի ուրիշ

կապակցութիւնից : Երկու սրի ցուցմունքը կարող է նշանակալից երեւալ մի աստուածաբանի , որը աւետարանի մէջ իրականութեան մի ճիշտ պատմութիւն է տեսնում : Նա կարեւորութիւն չունի մի պատմաբանի համար , որի աչքում աւետարանները ճշգրիտ եւ նշանակալից արտայայտութիւններն են այն շրջանի ձգտումների ու տրամադրութիւնների , որոնցից նոքա առաջ են եկել , որի աչքում նրանք կատարելապէս անվստահելի են երեւում , որպէս աղբիւր մասնակի դէպքերի ու խօսքերի :

Բաց ի Յիսուսի բաւական համարած սրերի քշութեան ցուցմունքից , Վինդիշը չի բերում ուրիշ ոչ մի փաստ , թէ զինւելու պահանջը պաշտպանւելու համար է ասուած եւ ոչ թէ յարձակւելու : Բայց այն դերի մէջ , որ նա վերագրում է Յիսուսին , նրա զինւելու պատւիրանը բացատրելով որպէս լոկ ինքնապաշտպանութեան ցանկութիւն , այն դերի մէջ իւր հերոսը երեւում է ոչ իբրեւ «ամենախելօքը» եւ ոչ էլ որպէս ամենաանվկանդը :

Վինդիշը գործը ներկայացնում է հետեւեալ ձեւով .

Յիսուսը քարոզում էր միշտ համբերութիւն , վշտակցութիւն եւ զանցառութիւն ամէն մի դիմադրութեան : Նա խմանում է , որ ինքը պէտք է կալանաւորէ : Այդ լուրից նա բոլորովին կորցնում է իւր հաւասարակշռութիւնը , կորցնում է գլուխը եւ վճռում է զինւած դիմադրութիւն երկու սրով :

Այսպիսի մի վարմունք . խօսելով ըստ Վինդիշի , անօրինակ է : Ով այնպէս խաղաղասէր ու հնազանդ է , ինչպիսին համարւում է Յիսուսը եւ ընդ սմին , ինչպէս Վինդիշն է ընդունում , երկիւղանում է վճռական բռնաբարութիւն , մարտիրոսանալուց , նա չի որոշի բռնի դիմադրութիւն , մտնաւանդ կատարելապէս անբաւարար միջոցներով : Նա կը փախչէր : Դորա համար Յիսուսը , եթէ նա իրօք Վինդիշի ասած հոգեբանական պրօցեսով բռնուած էր ,

պէտք է աւելի շատ մտածէր , որ լեռնոտ Գալիլիայի անապատը մօտ է եւ իրեն լաւ ծանօթ . ու փորձառութիւնը ցոյց է տալիս , որ մարդ կարող է այնտեղ երկար տարիներ ամէն տեսակի հետապնդումներից ազատ մնալ :

Եթէ Յիսուսը չը փախաւ՝ այդ միայն երկու ենթադրութիւնով կարելի է բացատրել . կա'մ նա անապատն խաղաղասէր էր եւ քամահրեց իւր անձի փրկութիւնը ու երբեք չը մտածեց իւր հետեւորդներից հեռանալ , այդ դէպքում զինւելու պահանջը բացարձակապէս անմիտ կը լինի : Կամ իրօք զինւել պահանջւել է եւ այդ դէպքում միայն այն հասկանալի է , որպէս մի բռնի ապստամբութեան նախապատրաստութեան պահանջ : Մի երրորդ ենթադրութիւն լինել չէ կարող :

Եթէ Յիսուսն իրօք ապրել է եւ իւր վախճանը իսկապէս խոր ազդեցութիւն է թողել իւր կուսակիցների վրայ , այն ժամանակ նա չէր կարող այնպէս ցաւալի կերպով վարւել , ինչպէս Վինդիշը ենթադրում է , թէ նա վտանգի բռնաբարութիւն գլուխը կորցրեց եւ անբաւարար զինման անմիտ ցուցմունքներ տուեց , որոնք հակասում էին իւր ամբողջ ուսման եւ բացասում ամէն մի հետեւանք . ապա թէ նա նորից ուրիշ բան մտածեց , հրաժարեց զինւած ապստամբութիւնից , մոռնալով իւր աշակերտներին նախկինի հակառակ կարգադրութիւն անել . եւ երբ նոքա իւր սեպհական պատէրներին համաձայն սկսում են կռւել , ինքը առանց կռիւի անձնատուր է լինում : Այսպէս չի վարւի եւ ոչ մի հերոս , որի յիշատակը մարդիկ գնահատում են :

Ինչպէս բոլորովին հակառակ ձեւով վարեց Սոկրատեսը , երբ ճգնաժամը մօտենում էր :

Բայց դրանով սպառնում են այն առարկութիւնները , որոնք Վինդիշը բերել է ընդդէմ իմ ըմբռնման : Իսկ

իմ ըմբռնման յենարաններից մէկի՝ Յուդայի մասնութեան մասին՝ նա ոչինչ չի ասում:

Աւետարաններից երեւում է մի ուժեղ ու խոր ատելութիւն մասնիչ Յուդայի դէմ: Եթէ սա մի երեւակայական անճշաւորութիւն չէ, ալ մի պատմական անճշաւորութիւն, այն ժամանակ նա մեղանշած պէտք է լինի քրիստոնէական համայնքի վերաբերմամբ մի անշափ անարգ ու մեղսալից գործով: Բայց ի՞նչ մեղադրանք է դրւում նրա վրայ աւետարաններում: Նա մասնել է իշխանութեան երեսուն դահեկանի համար, թէ ով էր Յիսուսը:

Կարելի է լուրջ բանի տեղ դնել այս իրադարձութիւնը: Նոյն իսկ եթէ մեսիական ճանապարհորդութիւնը դէպի Երուսաղէմ եւ դրամատերերի արտաքսումը տաճարից մեծացրած կամ ամբողջապէս հնարովի համարինք, այնու ամենայնիւ եթէ Յիսուսն իրօք ապրել եւ ատելի էր դարձել իշխանութեան, ապա նա պէտք է մեծ ագիտացիա մղած լինէր, որ նրան յայտնի դարձրած կը լինէր լայն շրջանների: Եւ ա՛յո՛ւ դէպքում իւր հակառակորդները կարիք կ'ունենայի՞ն կաշառելու նրա ամենահաւատարիմներից մէկին, իմանալու համար, թէ ո՞վ էր նա:

Ի՞նչ կար երուսաղէմում իշխանութեան մասնելու համար, եթէ Յիսուսը միայն լուռ համբերութիւն եւ սեպհական անձի բարոյական բարձրացումն էր քարոզում: Ոչինչ, բոլորովին ոչինչ: Միայն, եթէ Յիսուսը անդամ էր մի գաղտնի յեղափոխական կազմակերպութեան՝ այն ժամանակ Յուդան մասնելու մի բան կ'ունենար:

Այս արգումնաւորացիային Վինգիշը չի համաձայնում: Նա մանրամասն նկարագրում է, թէ Յուդան ինչ մօտիւններ կարող էր ունենալ մասնելիս. մի նիւթ,

որ բացարձակապէս մի բանաստեղծի կը վերաբերէ եւ ոչ թէ մի պատմաբանի, որովհետեւ դրա համար չկան կարեւոր հիմունքներ եւ երեւակայութիւնը կարող է անսահման կերպով իշխել: Բայց ինչ որ Յուդան իսկապէս ունէր մասնելու համար, Վինգիշին շատ քիչ է հետաքրքրել: Նա մտածում է այս հարցի պատասխանը «Երկու սրերի» ցուցմունքով ստանալ: Սակայն երկու զինւածները մի «ծիծաղելի միութիւն» էին հաստատել որ ինքն ըստ ինքեան բացասում էր որ եւ է մի կռիւ ծրագիր: Դրա համար նա նկատում է մի ծանօթութեան մէջ «Այսպէս փարատում է նաեւ կառուցիւ այն ենթադրութիւնը, որ որպէս թէ այս դիմադրութեան ծրագիրն է եղել, որ Յուդան մասնել է կառավարութեան:

Սրերի երկու լինելն է Վինգիշի լուսաբանութեանց ալֆան եւ օմեղան, դա միակ առարկութիւնն է, որ նա իմ մեկնութեանց դէմ է դուրս բերում: Նա չի նկատում, որ սրերի այս երկութիւնը ոչ մի մեկնութեան համաձայն չէ եւ ուեալ կապակցութեան մէջ կատարեալ անմտութիւն է ներկայացնում: Նա աշխատում է բռնել այս զննութեան մէջ ամէն մի շիւղից, որոնցից միմիայն խեղդուողներն են բռնում:

III

Սակայն եւ այնպէս Վինգիշի ջանքերը վերաբերում են միայն Յիսուսի անճշաւորութեան: Որ քրիստոնէական նախնական համայնքը իրաւ բռնութեան տրամադրուած էր, նա ինքը խոստովանում է. նա ասում է հարցական կտորների մասին. «Նոքա յայտնապէս ցոյց են տալիս, ինչպէս Յիսուսը ապրում էր այնպիսի հանգամանքներում, որ բռնութեան մասին էր մտածում, եւ

Թէ ինչպէս ինքը առ հոռազն մի կարճ ժամանակ աչքի առաջ ունէր դորա անհրաժեշտութիւնը: Նա յաղթա-
հարեց փորձութիւնը: Նա կանգնեց այնտեղ մաքուր,
վրէժխնդիր, արիւնհոռշտ ու անողորմ աշխարհում՝ իբ-
րեւ սիրոյ, խաղաղութեան եւ համբերութեան մարդ»
(ե. 50):

Նա շարունակում է.

«Կարող են այն ժամանակ (ք. յ. Ա. դարում) քրիս-
տոնեաներ եղած լինել, որոնք, ինչպէս Յիսուսի աշա-
կերանները բռնի դիմադրութիւն էին ցանկանում Գեթ-
սեմանի այգում, այնպէս էլ նրանք ձգտէին հրէական
ձեռով մեծիական կռիւ առաջ բերել» (ե. 75):

«Ի զո՛ւր էր աշխատում Յիսուս Նազովրեցին մե-
սիայով ոգեւորւած հրէութեան մարտական ոգին իւր ա-
շակերտների շրջանից դուրս վանել» (ե. 77):

«Այս բնաշխն կռիւ բոլոր սարսափները, ինչպէս
հանդարտիկ կերպով նկարագրում է այն հրէական վեր-
ջաբանութիւնը, քրիստոնէական յայտնութիւնը Յիսուսի
համայնքի թշնամիների առաջն է դրել: Երկիւղալի
դիւական զօրապետներ եւ բանակներ, որոնք ոչնչա-
ցնում են մարդկանց մեծ մասին, երեւում են այստեղ
որպէս մեծիա Յիսուսի առաքեալներ, վերջնական ճա-
կատամարտը նա ինքը պիտի ապ: Եւզրասի նկարագրու-
թեան (Ս. Գիրք) բոլորովին համապատասխան մի փայ-
լուն պատկեր է դուրս բերում կռիւ հերոս Յիսուսը: Եւ
այստեղ երեւում է նոյն միջոցին ճնշւած հրէութեան
վրէժխնդիր տրամադրութեան ինչ ոք մի արտայայտու-
թիւն: Քրիստոնեաները, որոնք տանջւել էին, դողում
էին հրէական մեծիական յուսոյ իրականացման համար»
(ե. 80):

Այս խօսքերը շատ էլ չեն տարբերւում նրանցից, ու
որոնք ես ասել էի նախնական համայնքի ապստամբա-

կան տրամադրութեան համար: Եւ բանը նրանումն է,
որ պատմական տեսակէտից նրանք են առաջին տեղը
բռնում եւ ոչ թէ այն պատկերը, որ երեւակայում են
մարդիկ Յիսուսի անձնաւորութեան համար: Միայն
Աստուածաբանների՝ համար լուր այսբանը բաւական է:
Ես բոլորովին դիտաւորութիւն չեմ ունեցել Յիսուսի
կեանքը գրելու, ես ցանկացել եմ հետազօտել քրիս-
տոնէական նախնական համայնքը, որպէս ՀԱՍԱՐԱԿԱ-
ԿԱՆ երեւոյթ: Ես միանգամայն առկա եմ թողել ինչ
որ Յիսուսի անձնաւորութեան մասին կարելի էր ասել,
եւս առաւել, որ այդ մասին ըստ աղբիւրների որոշ եւ
ամէնքից ընդունւած բաներ առաջ չեն բերւած: Ինչ-
քան էլ ես Յիսուսի անձնաւորութեան մասին խօսում
եմ, նրա մասին ասածները ընդունում եմ որպէս սիմ-
պտոմներ, ցուցումներ այն բոլորի, ինչ որ նրա մասին
գրւած է, եւ ոչ թէ իւր Յիսուսի ճանաչման նշաններ:
Ես բոլորովին մի կողմն եմ թողնում, թէ Յիսուսը իս-
կապէս մի ապստամբ էր. կամ թէ արդեօք նա իրօք
ապրել է: Եթէ ես մասնանշում եմ, որ աւետարանի ու-
րոշ կտորներ Յիսուսին որպէս ապստամբ են ցոյց տալիս
ապա այդ ինձ համար այն չափով միայն կարեւոր է,
ինչ չափով նա ցոյց է տալիս, որ հին (քրիստոնէական)
համայնքում կային տարրեր, որոնք ըմբոստութեան մը-
տածմունքներ ունէին եւ իրենց մտածմունքի արդա-
րացման համար ընդունում էին Յիսուսին որպէս ապրա-
տամբի: Ես ասում եմ.

«Ինչքան էլ հեզ ու խոնարհ երեւար Յիսուսը,
անշուշտ նա արտայայտւում էր այլ տեսակ, որ ենթադ-
րել է տալիս, թէ նա, իրօք ապրելիս լինէր, թէ լինէր
մի երեւակայական տիպ, սկզբնական աւանդութիւննե-
րում ապրում էր որպէս ապստամբ, որը մի դժբաղդ
անյաջող ապստամբութեան պատճառով խաչեցաւ»
(«Քրիստոնէութեան ծագումը» ե. 384):

Այսպէս, եթէ Վինգիշը ինքը ընդունում է, որ նախնական քրիստոնէական համայնքում ապստամբական ու գին այնպէս ուժեղ է եղել, որ նրա գրականութեան մէջ արտայայտել է, այն ժամանակ նա ասում է այն բոլորը, որ ես ուզում եմ ասել: Այնուհետեւ ինչ որ նա բերում է իմ դէմ, շատ երկրորդական է: Նա կարծում է:

«Այն պրոցեսը, որ մենք այժմ նկարագրում ենք, ներկայացնում է իրենից հրէականացումն աւետարանի: Հրէական վերջաբանութեան աւանդութիւնը այստեղ աւելի ուժեղ է երեւում, քան Յիսուսի հոգին: Մարտական ամէն մի դօրացման բացատրումը որ վարդապետում էր ուսուցիչը յաջորդ ժամանակներում որոշ շրջաններում յայտնապէս չէր յարգւում կամ նկատում էր միայն որպէս անցողական արամադրութիւն: Յիսուսի կեանքն ու մտածմունքները այս տեղ մոռացւում են: Հոգին որի դէմ Յիսուս կռուել էր, վերջապէս նրան ընկճում է: Հրէական մեսիական պատկերը կախարդում էր հաւատացեալների միտքը: Քրիստոնէական գրեւորները աւանդում են վկայութիւններ մարտական մեսիականութեան եւ հարստացում են մեր ծանօթութիւնները հրէական վերջաբանութեան մեսիական կուր մասին:

«Այսպէս մենք գալիս ենք այն եզրակացութեան, որ հառցելու հայեացքը շուտ է աւել երեւոյթների իսկական ծագումը: Յիսուսի իրական մարտականութիւնը գունաւորւած է: Ոչ թէ մի ապստամբ է խաղաղութեան եղբայր կոչւել, այլ մի մարգարէ եւ համբերող իւր ապագայ յայտնութեան համար գօտեւորել է մեսիական հրաշալի սրով: Նրա զգացումների արհամարումով եւ դրանից բխող բռնութեան դէմ ուղղւած բողոքով ու վրէժխնդրութեամբ նա ստորացւում է մինչեւ մարդկային պատմութեան ապականիչը եւ վերջաբա-

նութեան սարսափների ուսուցիչը լինելու աստիճան» (Ե. 81):

Հակառակ իմ ենթադրութեան մի փոփոխութեան, այն է, որ նախնական քրիստոնէական համայնքի սկզբնական ապստամբական միաբանութիւնը յետոյ փոխել է համբերատար հնադանդութեան, Վինգիշն ընդունում է կրկին փոփոխութիւն, առաջ քրիստոնէութիւնը խաղաղասէր էր, ապա դարձաւ ապստամբական եւ վերջապէս նորից խաղաղարար:

Միաբանութեանց այսպիսի արագ փոփոխութիւնը երբէք հնարաւորութեան սահմաններից դուրս չէ եւ ունի իւր անաւօգիան յետագայ կոմունիստական հերձաւորական շարժումների մէջ:

Քանի պրօլետարիատը չէ հասարակութեան հիմք կազմողը, այլ միայն նրա աւելորդ մասը, ինչպէս նախ քան կապիտալիստական արդիւնաբերութեանը զարգացալը, նա չի կարող միայնակ դասակարգային լուրջ կոիւմղել: Եթէ հասարակութիւնը հանգիստ է, այն ժամանակ նրա համարեա ամենալաւ պաշտպանները ահաբեկումն են որոշ կերպով իւրաքանչիւր ըմբոստացում ընդդէմ եղած օրէնքի: Այդ ժամանակ նա այնքան զրկանք է կրում այդ օրէնքի ներքոյ, որ մի ուրիշ ուժեղ դասակարգից եղած իւրաքանչիւր հարկադրութիւն դառնում է պրօլետարիատի համար մի ազգանշան ապստամբելու եւ ուրիշ ըմբոստ դասակարգերին առաջ մղելու: Այն ժամանակ առաջ է գալիս հեշտութեամբ մի յանկարծակի ցատկումն խոնարհ համբերութիւնից դէպ ի արիւնալի բռնութիւն:

Այսպիսով նախնական քրիստոնէական համայնքում միաբանութեան բազմակի փոփոխութիւնը անկարելի չէր եւ ոչ էլ սխալ երեւող:

Վինգիշի այդ եզրակացութիւնից մատերիալիստ պատմաբանն էլ կարող է շատ գոհ լինել: 25-րդ բոլոր

աստուածաբանները ասում են մեզ, որ քրիստոնէութիւնը միայն Յիսուսի հոգու շնորհիւ է հաստատուել: Իսկ այստեղ մի աստուածաբան ընդունում է, որ Յիսուսի հոգին ենթարկւած էր իր կուրի մէջ սօցիալական հանգամանքներից բխող տրամադրութեանց ու կարիքների, որ հիմնողի գենտեցները թիւրւում էին բոլորովին հակառակը եւ այնքան ուժեղանում այդ ուղղութեամբ, որ նոյն իսկ քրիստոնէական յետագայ պաշտօնական գրութեանց մէջ նրանից հետքեր էլ են պահւում: Ոչ թէ Յիսուսի անձնաւորութեան ու վարդապետութեան ամենակարողութիւնն է քրիստոնէական համայնքի մէջ մարտական մեծիականութիւնը բոլորովին փոխել, այլ հասարակական պայմանների փոփոխութիւնը, հրէական ամբողջութեան ոչնչացումը, ոչ հրէական տարրերի քրիստոնէութեան մէջ ընդունելը:

Քրիստոնէութեան տուածացման պատմութեան մէջ մատերիալիստական պատմահայեցողութեան մի աւելի լաւ հաստատումն է Յիսուսի հրաշագործութեան մի աւելի ուժեղ քննադատութիւն՝ մի աստուածաբանից անսպասելի է: Որպէսզի Յիսուսին զերծ ցոյց տայ ապստամբական մտածմունքից, նա յայտարարում է, որ Յիսուսն անգոր էր իւր սեպհական աշակերտների ապստամբական գենտեցների դէմ:

Եթէ մենք հակառակ Վինգիշի լուսաբանութեան չենք կարող նրա եզրակացութեան գալ, այդ նրա համար, որ նա ընդունում է Նոր Կտակարանի ծագման մի անհնարին պատմութիւն:

Համաձայն մեր ըմբռնման այս գրքերի բռնութեան վերաբերող կտորները լուսաբանւում են նրանով, որ նրանք խոր արմատացած տրադիցիաների մնացորդներն են, որոնք համայնքի լուծւելուց յետոյ, բոլորովին չհեռացեցին. միայն մի այսպիսի տրադիցիայի արմատացումն էր հնարաւոր, եթէ նախնական համայնքը

իւր սկզբից ապստամբական էր եւ այն էլ առանց բացառութեան միաբանութեամբ տողորւած:

Վինգիշի ենթադրութեան համաձայն՝ Յիսուսի մահւանից յետոյ իւր աշակերտների մէջ առաջ եկաւ բռնութեան ձգտում, բայց մնացին նաեւ խաղաղարար միտումները, այլապէս անհասկանալի կը լինէր, ինչպէս Յիսուսի խաղաղ ու համբերատար պատկերը այնպիսի հանգամանքներում, ինչպէս աւետարանն է նկարագրում, բերանացի աւանդութիւնների մէջ կարող էր մնալ, որը ըստ Վինգիշի մի վստահելի տեղեկագիր է իրական հանգամանքների:

Եթէ Վինգիշի ենթադրութիւնը ճիշտ լինէր, այն ժամանակ քրիստոնէական համայնքի մէջ պէտք է կազմէին երկու աւանդութիւններ, մէկը՝ խաղաղական, միւսը՝ մարտական. Վերջինը սկզբից եւեթ պէտք է կուած լինէր կեղծիքի դէմ, որը այն ժամանակ հազիւ թէ հաւանութիւն գտնէր բոլորից, ուր մնաց թէ համայնքի գիտակցութեան մէջ այնպէս խորը արմատացար, որ խաղաղարար միտումներ ունեցող այդ աւանդութեանց յետագայ հաւաքողները բռնութեամբ տրամադրւած առանձին հոսանքներից, նրանց հակառակ լինելով հանդերձ, նօթեր վերցրած լինէին: Այդ դէպքում մարտական բնոյթ ունեցող աւանդութիւններից ամենաքիչ չափով չէր մտնի պաշտօնական գրքի մէջ մի եկեղեցու, որին իւրաքանչիւր ըմբոստութիւն պետական ուժի դէմ ըստ ամենայնի անհաճոյ էր: Եթէ խաղաղական բնոյթ ունեցող աւանդութիւնները յետ չմղէին, մնային առանց ինքնահակասութեան, այն ժամանակ մարտականը որպէս կեղծիք՝ կը մերժւէր:

Եկեղեցու համար հեշտ էր վճռել այդ խաղաղամտների հարցը, բայց միայն այն ժամանակ, երբ այդ բանը իր գործին դար: Անհաճոյ եղծումների դէմ նա

գիտէր խիստ քննադատող լինել; ինչպէս եւ անհաճոյ
ճշմարտութիւնների դէմ:

Վինդիշի ա'յս մեկնութիւնն էլ միայն մի փորձ է
հին հանելուկը նորով եւ աւելի մեծով լուսաբանելու:
Նրա համար ոչինչ նշանակութիւն չունի, բայց եթէ
միայն աստուածաբանների կարիքը՝ Յիսուսին ազատ
կացուցանել քրիստոնէական նախնական համայնքի
խռովարար ոգու ամէն մի յարաբերութիւնից. մի քան,
որ չի կարելի ուրանալ: Նա անում է այս այն երկիւղի
առաջ, թէ Յիսուսը իւր համայնքի հոգեւոր պետ լի-
նելուց կ'իջնէ մինչեւ նրան չհասկացող, արհամարհող,
իւր մէջ ամբիփառ մի առաջնորդի ստոր աստիճանը,
մի առաջնորդի, որի վարդապետութիւնը խիստ հակա-
սում եւ խեղդում էր նախկինի վարդապետութեան:

Նշանակալից է, որ պետական աստուածաբանու-
թիւնը իւր կրօնի հիմնադրի անձնաւորութեան նւա-
տացմանը աւելի հաշտ աչքով է նայում, քան նրա ա-
պրստամբ լինելուն:

(Վ Ե Ր Զ)



ՀՄԱՅԵԱԿ ԱՐԱՄԵԼԵՅԻ (Մ. ՇԻՈՏ) Հե-
ղինակութիւնները, Թարգմանութիւն-
ները եւ Հրատարակութիւնները: Ղ. Փ.

1. Քիւրտ Պէկ, Բ. Տիպ (սպառած)	2
2. Անաստուածները,	5
3. Մերձեցում	2 20
4. Հնչակ	1 10
5. Հանրային դատաստանին »	— —
6. Արամ, Բ. Տիպ	3 10
7. Դատ	1 10
8. Սեւ Հարսանիք	1 10
9. Քրդերը Տաճկա-Հայաստանու	5
10. Անմահ ժիրայր, տրամ 5 արար	3
11. Բռնակալին Մահը, տրամ 3 արար	3
12. Միւսթէպիտին վէճամը, տրամ 3 արար	2 20
13. Թուրքիոյ Ընդդիմադիր Տարրերը	1 20
14. Փախստականը	2
15. Հերոսահիներ	3
16. Ազատութիւն Քաղ. և Տնտեսական	2
17. Թշուառների բոյրը	2
18. Ինչ է Հայրենիքը	2
19. Կորչին Սօցիալ Դեմօքրատները	1 20
20. Գիւղական Ուսուցչի Ձայնը	2
21. Երկու Եւրոպա	30
22. Հայուն Երգարանը (փառակազմ 15)	10
23. Դայլայլիկ երգարան	8
24. Երկրագործութեան, անտառաց և հանքաց շահագործումն ու զարգացումը	30
25. ԿՈՀԱԿ, Ա. Տարի հաւաքածոյ	20
26. ԿՈՀԱԿ Բ. տարի հաւաքածոյ	20
27. ԿՈՀԱԿ Գ. տարի հաւաքածոյ	20
28. ԿՈՀԱԿ Դ. տարի ի բաժանորդագրութեան	20
29. ԳԻԻՂԱՏՆՏԵՍ	10
30. Քարծ-բոսմալներ 30 տեսակ, հատը	10
31. Ապստամբ Յիսուսը (ընդ մամլով)	1
32. Պարսկաստան և Պարսիկ Յեղափոխու- թիւնը (ընդ մամլով)	6
33. Լրտեսներու երկիրը և Ապտ-իւլ-Համիտ	6

Մեծաբանակ գնողներուն կարեւոր գեղջ
Նամակ, թղթակցութիւն, գրամ եւլն.
ղրկել միայն հետեւեալ հասցէին՝
Փոստարկ, քիւ 125, Կ. Պոլիս
Խմբագրատունը չը գտնուի, Կ. Պոլիս
Պապը Ալի Էպուստուտ փողոց թիւ 27:

1833
1834
1835
1836
1837
1838
1839
1840
1841
1842
1843
1844
1845
1846
1847
1848
1849
1850
1851
1852
1853
1854
1855
1856
1857
1858
1859
1860
1861
1862
1863
1864
1865
1866
1867
1868
1869
1870
1871
1872
1873
1874
1875
1876
1877
1878
1879
1880
1881
1882
1883
1884
1885
1886
1887
1888
1889
1890
1891
1892
1893
1894
1895
1896
1897
1898
1899
1900

1833
1834
1835
1836
1837
1838
1839
1840
1841
1842
1843
1844
1845
1846
1847
1848
1849
1850
1851
1852
1853
1854
1855
1856
1857
1858
1859
1860
1861
1862
1863
1864
1865
1866
1867
1868
1869
1870
1871
1872
1873
1874
1875
1876
1877
1878
1879
1880
1881
1882
1883
1884
1885
1886
1887
1888
1889
1890
1891
1892
1893
1894
1895
1896
1897
1898
1899
1900

1833
1834
1835
1836
1837
1838
1839
1840
1841
1842
1843
1844
1845
1846
1847
1848
1849
1850
1851
1852
1853
1854
1855
1856
1857
1858
1859
1860
1861
1862
1863
1864
1865
1866
1867
1868
1869
1870
1871
1872
1873
1874
1875
1876
1877
1878
1879
1880
1881
1882
1883
1884
1885
1886
1887
1888
1889
1890
1891
1892
1893
1894
1895
1896
1897
1898
1899
1900



Mr. Gabriel H. Malanian

22 Ford Street
Hartford Conn.

(U.S.)

ՀԱՅՏԵԱԿ ԱՐԱՄԵԼԸՅԻ (Մ. ՇԻՈՏ) Հեղինակութիւնները, Թարգմանութիւնները եւ Հրատարակութիւնները : Ղ. Փ.

1. Քիւրտ Պէկ. Բ. Տիպ (սպառած)	2
2. Անաստուածները,	5
3. Մերձեցում	2 20
4. Հնչակ	1 10
5. Հանրային դատաստանին	—
6. Արամը, Բ. Տիպ	3 10
7. Դատ	1 10
8. Սեւ Հարսանիք	1 10
9. Քրդերը Տաճկա-Հայաստանու	5
10. Անմահն ժիրայր, տրամ 5 արար	3
11. Բռնակալին Մահը, տրամ 3 արար	3
12. Միւթէպիտին վէճամը, տրամ 3 արար	2 20
13. Թուրքիոյ Ընդդիմացիի Տարբերը	1 20
14. Փախստականը	2
15. Հերոսութիւններ	3
16. Ազատութիւն Քաղ. և Տնտեսական	2
17. Թշուառների քոյրը	2
18. Ինչ է Հայրենիքը	2
19. Կորչին Սոցիալ Դեմոքրատները	1 20
20. Գիւղական Ուսուցչի Ձայնը	2
21. Երկու Եւրոպա	30
22. Հայուն Երգարանը (խառակազմ 15)	10
23. Դայլայլիկ երգարան	8
24. Երկրագործութեան, անտառաց և հանրաց շահագործումն ու զարգացումը	30
25. ԿՈՀԱԿ, Ա. Տարի հաւաքածոյ	20
26. ԿՈՀԱԿ Բ. տարի հաւաքածոյ	20
27. ԿՈՀԱԿ Գ. տարի հաւաքածոյ	20
28. ԿՈՀԱԿ Դ. տարի ի բաժանորդագրութեան	20
29. ԳԻՒՂԱՏՆՏԵՍ	10
30. Քարթ-բոսթալներ 30 տեսակ, հատը	10
31. Ազատամբ Յիսուսը (ընդ մամլով)	1
32. Պարսկաստան և Պարսիկ Յեղափոխութիւնը (ընդ մամլով)	6
33. Արտեսներու երկիրը և Ազտ-իւլ-Համիս	6

Մեծաբանակ գնողներուն կարեւոր զեղչ

Կամակ, թղթակցութիւն, դրամ եւլն.

եւեալ հասցէին

և 125, Կ. Պոլիս

ենը կը գտնուի, Կ. Պոլիս

սուտ փողոց թիւ 27:

8089 - 8100

ՀՀ Ազգային գրադարան



NL1711122

ՀՀ Ազգային գրադարան



NL1711116

ՀՀ Ազգային գրադարան



NL1711121

ՀՀ Ազգային գրադարան



NL1711115

ՀՀ Ազգային գրադարան



NL1711120

ՀՀ Ազգային գրադարան



NL1711114

ՀՀ Ազգային գրադարան



NL1711119

ՀՀ Ազգային գրադարան



NL1711113

ՀՀ Ազգային գրադարան



NL1711118

ՀՀ Ազգային գրադարան



NL1711112

ՀՀ Ազգային գրադարան



NL1711117

ՀՀ Ազգային գրադարան



NL1711111

Handwritten signature

